

«Սևանա լիճ. ներկա վիճակը, ընթացիկ հետազոտության արդյունքները և հետագա հետազոտության կարիքները» թեմայով միջազգային աշխատաժողով ԸՇ ԳԱԱ-ում



Սույն թվականի ապրիլի 29-ին ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Սևանա լիճ. ներկա վիճակը, ընթացիկ հետազոտության արդյունքները և հետագա հետազոտության կարիքները» թեմայով միջազգային աշխատաժողով:

Հայ և գերմանացի մասնագետները ներկայացրեցին «SevaMod» ծրագրի՝ Սևանա լճի բնական պաշարների կայուն կառավարման և օգտագործման համար ստեղծվող մոդելի առաջին փուլի արդյունքները, քննարկեցին ծրագրի հետագա շարունակման հնարավորությունները:

Աշխատաժողովը բացեց Գերմանիայի Սազդեբուրգի Շրջակա միջավայրի հե-

տազոտության Հելմհոլցի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի գիտնական Սարտին Շուլցեն, ով ներկայացրեց ծրագրի նպատակները, գործընկերներին և աջակիցներին:

Սևանա լիճն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող ամենաբարձրադիր լճերից մեկն է: Սակավաջուր մեր երկրի կյանքում մեծ է Սևանի նշանակությունը: Նրա հետազոտությունները կարևոր նշանակություն կունենան էկոհամակարգի բարելավման համար, նշեցին աշխատաժողովի մասնակիցները:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին «Սևանա լճի էկոլոգիան», «Սևանա լճի ավազանում հիդրոկլիմայա-

կան բնութագրերի փոփոխությունները», «Ֆոսֆորը Սևանա լճի հատակային նստվածքներում», «Սևանա լճի այժմյա և հետագա ստրատիֆիկացիայի մոդելավորում» և այլ զեկուցումներ:

Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Յուրի Ջավադյանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանը, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Արամ Ղարիբյանը, ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյա-

նը, Գերմանիայի Սազդեբուրգ քաղաքի Շրջակա միջավայրի հետազոտության Հելմհոլցի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի ղեկավար Կ. Ռինկեն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի նախագահ Վարդան Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կառույցների ղեկավարներ, գիտնականներ Հայաստանից, Գերմանիայից, Ռուսաստանից, ՀՀ պետական պատասխանատու մարմինների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, Գերմանիայի Սազդեբուրգ քաղաքի Շրջակա միջավայրի հետազոտության Հելմհոլցի կենտրոնը (UFZ) և ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնը: Աշխատաժողովն անցկացվեց Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարության (BMBF) կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի մոդելի մշակում նրա էկոլոգիայի ավելի լավ ըմբռնման համար և որպես նրա բնական պաշարների կայուն կառավարման և օգտագործման գործիք» թեմայով գիտահետազոտական ծրագրի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն